«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով
14-17 սեպտեմբերի 2017թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК МАТЕРИАЛОВ

2-ая международная молодёжная конференция

«ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ»

14-17 сентября 2017г.
Арцах (НКР), г.Степанакерт

‘‘ISSUES AND PROSPECTS OF THE ARTSAKH REPUBLIC’S INTERNATIONAL RECOGNITION’’

2nd international youth conference
September 14-17, 2017
Stepanakert, Artsakh (NKR)

SOURCEBOOK

ԱԵԳՄՄ-ОМУСА-UYSSA
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН-YEREVAN
2017

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0
Ա 948

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта
Recommended for publication by the decision of the Academic Council of the Mesrop Mashtots University in Stepanakert

Խմբագրական խորհուրդ
Նախագահ՝ ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գագիկ Ղազինյան**
Անդամներ՝ հ.գ.դ., պրոֆ. **Հրանտ Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վալերի Ավանեսյան**, ք.գ.դ., դոց. **Խաչիկ Գալստյան**, ի.գ.դ., պրոֆ. **Վլադիսլավ Գրուզդև**, ք.գ.դ., պրոֆ. **Սոկրատ Խանյան**, ի.գ.դ., պրոֆ. **Աշոտ Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մարիամ Մարգարյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հայկ Սարգսյան**, ք.գ.դ., պրոֆ. **Գարիկ Քեռյան**, պ.գ.թ., դոց. **Գրիգոր Բալասանյան,** պ.գ.թ., դոց. **Նելլի Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Եվգենյա Հայրիյան**, ի.գ.թ., դոց. **Անահիտ Մանասյան**, հ.գ.թ., դոց. **Վիտյա Յարամիշյան**, տ.գ.թ., դոց. **Կարեն Ներսիսյան**, ի.գ.թ. **Սիրանուշ Պետիկյան**
Քարտուղար՝ ի.գ.թ. **Ավետիք Հարությունյան**

Редакционный совет
Председатель: д.ю.н., проф., академик НАН РА **Гагик Казинян**
Члены: д.п.н., проф. **Грант Аванесян**, д.и.н., проф. **Валерий Аванесян**, д.п.н., доцент **Хачик Галстян**, д.ю.н., проф. **Владислав Груздев**, д.ф.н., проф. **Сократ Ханян**, д.ю.н., проф. **Ашот Хачатрян**, д.п.н., проф. **Мариам Маргарян**, д.э.н., проф. **Айк Саргсян**, д.п.н., проф. **Гарик Керян**, к.и.н., доц. **Григор Баласанян**, к.и.н., доц. **Нелли Багдасарян**, к.э.н., доц. **Евгения Айриян**, к.ю.н., доц. **Анаит Манасян**, к.п.н., доц. **Витя Ярамишян**, к.э.н., доц. **Карен Нерсисян**, к.ю.н. **Сирануш Петикян**
Секретарь: к.ю.н. **Аветик Арутюнян**

Editorial board
Editor-in-Chief: Gagik Ghazinyan, LL.D., Prof., NAS RA Academician
Editors: **Hrant Avanesyan**, Psy.D., Prof., **Valeri Avanesyan**, Doctor of History, Prof., **Khachik Galstyan**, Dr sc. pol., Assoc. Prof., **Vladislav Gruzdev**, LL.D., Prof., **Sokrat Khanyan**, Doctor of Philology, Prof., **Ashot Khachatryan**, LL.D., Prof., **Mariam Margaryan**, Dr sc. pol., Prof., **Hayk Sargsyan**, Dr sc. ec., Prof., **Garik Keryan**, Dr sc. pol., Prof., **Grigor Balasanyan**, Candidate of History, Assoc. Prof., **Nelly Baghdasaryan**, Candidate of History, Assoc. Prof., **Yevgenya Hayriyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Anahit Manasyan** Candidate of Law, Assoc. Prof., **Vitya Yaramishyan,** Candidate of Psy. sc., Assoc. Prof., **Karen Nersisyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Siranush Petkiyan**, Candidate of Law
Secretary: **Avetik Harutyunyan**, Candidate of Law

Ա 948 «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.: ԱԵԳՄՄ, 2017, 284 էջ:

Ժողովածուում ներառված են «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборник включены материалы 2-ой международной молодёжной конференции «Проблемы и перспективы международного признания Республики Арцах».

The material covered by the 2nd international youth conference “Issues and prospects of the Artsakh Republic’s international recognition” are included into the sourcebook.

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0643-4

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2017

www.aegmm.org

ԼՂՀ ՀՌՉԱԿՈՒՄԸ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵՆ ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Մարինե Գևորգյան
ԵՊՀ, Հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.
manan21@mail.ru

1991 օգոստոսին արդեն ակնհայտ էր ԽՍՀՄ փլուզման անխուսափելիությունը: Դա նկատի ունենալով՝ օգոստոսի 30-ին, Բաքվում հրավիրված Ադրբեջանի ԳԽ-ն ընդունեց անկախության վերականգնման մասին հռչակագիր:[1] Ադրբեջանը, հռչակելով իր անկախությունը, հրաժարվում էր Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդը լինելուց, դա նշանակում էր, որ նրա կազմում չէր ներառվելու Լեռնային Ղարաբաղը, ուստի անհրաժեշտ էր շտապել և ձեռքից բաց չթողնել հարմար պատմական պահը:

1991թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջան՝ բոլոր մակարդակների պատգամավորների մասնակցությամբ[2]: Ընդունվեց «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» որոշումը, որով նախկին ԼՂԻՄ և Շահումյանի շրջանի տարածքում ձևավորվեց անկախ հայկական պետություն՝ ԼՂՀ-ն:[3]

Ստեփանակերտը, 1991թ. սեպտեմբերին ընդունելով «Անկախության մասին» հռչակագիրը, նպատակ ուներ միջազգային հանրությանը ներկայացնել իրավական տեսակետից անխոցելի և առարկություն չընդունող «անկախության հայտ»: Այդ հայտի գլխավոր իրավական փաստարկն այն էր, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հռչակվում է այնպիսի տարածքներում, որոնց հետ Ադրբեջանական Հանրապետությունը իրավական և պատմական որևէ առնչություն չունի[4]:

Փաստորեն, Ադրբեջանի անկախության հռչակումից հետո ԼՂԻՄ-ը և Շահումյանի շրջանը մինչև ԽՍՀՄ իրավաբանական գոյության ավարտն իրականացրին իրենց պետա-իրավական կարգավիճակների որոշմանը նպատակաուղղված ԽՍՀՄ գործող օրենսդրությամբ սահմանված իրավական քայլեր, հետևաբար Ադրբեջանի հավակնությունները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ԽՍՀՄ օրենսդրության շրջանակներում զուրկ են իրավական հիմքերից: Ադրբեջանական հավակնությունները մեր պատմական հայրենիքի նկատմամբ զուրկ են նաև պատմական ու բարոյական հիմքերից, քանզի Արցախը երբեք Ադրբեջանի մաս չի եղել[5]:

Անկախության համար արցախահայության դարավոր պայքարի պատմության մեջ դա պետականության նոր աստիճան է, որն ամփոփում է ժողովրդավարության, ազգային-ազատագրական պայքարի ձեռքբերումները և հանդիսանում է պետականության զարգացման օրինաչափ ու բարձրագույն աստիճանը՝ առանձին գավառների մելիքություններից, Ղարաբաղի հայկական մարզի ծրագրից, ժողովրդական ինքնակառավարումից և Լեռնային Ղարաբաղի

---

[1] НКР, История и современность, Степанакерт, 1998, с. 9.
[2] Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը, գիրք Գ, 1985-2000, Ստեփանակերտ, 2007, էջ 303:
[3] «Հայաստանի Հանրապետություն», 3 սեպտեմբերի, 1991:
[4] Մանասյան Ա., Լեռնային Ղարաբաղ: Ինչպես է դա եղել..., Երևան, 2011, էջ 110:
[5] Մինասյան Է., Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Եր., 2013, էջ 148:

ինքնավար մարզից հետո[1]:

1991 թ. սեպտեմբերի 3-ին Ադրբեջանի ԳԽ-ի Նախագահությունն ընդունեց որոշում, որով Արցախում նախորդ օրը տեղի ունեցածն որակեց դավադրություն Ադրբեջանի տարածքային ամբողջականության ու անկախության դեմ: Հանրապետության Կազմկոմիտեին հանձնարարվում էր ԼՂԻՄ-ում իրավիճակը կայունացելու և երկխոսությունը խորացնելու ուղղությամբ լրացուցիչ միջոցառումներ ձեռնարկել, արագացնել բնակչության զինաթափումը:

Ինչ վերաբերում է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի դիրքորոշմանը, ապա այն դեմ չէր ԼՂՀ ստեղծմանը և հայտարարեց, թե արցախահայությունը գտել է հարցի լուծման բանալին: 1991թ. սեպտեմբերին կար այն համոզմունքը, որ արդեն մոտ է Ղարաբաղյան հիմնախնդրի լուծումը: Հայաստանի Գերագույն խորհրդի նստաշրջանում սեպտեմբերի 9-ին հայտարարվեց, թե շուտով կվերականգնվեն մարզային իշխանությունները, մարզի տարածքից դուրս կբերվի ադրբեջանական ՕՄՕՆ-ը և բանակցություններ կսկսվեն Հայաստանի ու Ադրբեջանի միջև[2]:

Մ.Գորբաչովի նախագահությամբ սեպտեմբերի 16-ին տեղի ունեցած ԽՍՀՄ Պետական խորհրդի նիստը որոշում ընդունեց ԼՂԻՄ-ում վերականգնել մարզային և տեղական իշխանությունները: Ի պատասխան դրան՝ Ադրբեջանի ժողճակատի պարագլուխ Ա. Ալիևը հանրապետության հեռուստատեսությամբ կոչ արեց Լեռնային Ղարաբաղ ուղարկել 200 հազարանոց զինյալ ուժեր՝ «այնտեղ կարգ հաստատելու համար»: Ադրբեջանի Գերագույն խորհրդի նստաշրջանը նոյեմբերի 26-ին որոշում ընդունեց լուծարել ԼՂԻՄ-ը և Ստեփանակերտը վերանվանել Խանքենդի: Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովը դրանով փորձում էր հիմնավորել, որ չկա Ղարաբաղի մարզ, հետևապես չկա և Ղարաբաղի հիմնախնդիր: Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում Ադրբեջանի այդ որոշումը գնահատվեց որպես սադրանք հայ ժողովրդի նկատմամբ: Միջազգային հարաբերությունների այս նոր պայմաններում, ժամանակի քաղաքական պահանջներին համապատասխան՝ Ռուսաստանի և Ղազախստանի նախագահները ստանձնեցին միջնորդի դերը ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում[3]:

1991թ. սեպտեմբերի 22-ին Ստեփանակերտ ժամանեցին ՌԴ և Ղազախստանի Հանրապետության նախագահներ Բ. Ելցինը և Ն. Նազարբաևը: Ստեփանակերտ կատարած այցից հետո՝ սեպտեմբերի 23-ին, Ժելեզնովոդսկում նրանց հովանու ներքո կայացան բանակցություններ Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարների միջև, որոնց արդյունքում ընդունվեց համատեղ կոմյունիկե[4]: Այս համատեղ կոմյունիկեն բովանդակում էր հետևյալ դրույթները՝ կայունացնել իրավիճակը տարածաշրջանում, կրակը դադարեցնել, տեղահանված բնակչությանը վերադարձնել իրենց բնակության վայրերը, ազատ արձակել պատանդներին, երկաթուղային տրանսպորտի, օդային հաղորդակցության, կապի և հաղորդակցության միջոցների նորմալ կենսագործունեությունն ապահովել և այլն, սակայն կյանքը ցույց տվեց, որ այն չհանգեցրեց ԼՂ-ի իրավիճակի բարելավմանը: Ընդհակառակը, ադրբեջանական կողմը կտրուկ սաստկացրեց հրետակոծումները

---

[1] Ղահրամանյան Կ., Ղազինյան Ա., Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. պետականության ակունքները, Երևան, 2008, էջ 64:

[2] Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 308:

[3] Բալայան Տ., Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994թթ., Երևան, 2004, էջ 24:

[4] Հակոբյան Տ., ԼՂՀ-ի հռչակումը պետական շինարարության գործընթացը, Երևան, 2011, էջ 27-28:

և հայկական բնակավայրերի վրա կատարվող հարձակումները, որոնք բազմաթիվ զոհերի և ավերածությունների պատճառ դարձան: Մի խոսքով, գրված կոմյունիկեն մնաց թղթի վրա:

1991թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետությունում անցկացված հանրաքվեի հիման վրա սեպտեմբերի 23-ին Հայաստանի Գերագույն խորհուրդը հռչակեց Հայաստանի Հանրապետության անկախությունը: Հայաստանի ու Ադրբեջանի անկախացումը, որը 1992թ. սկզբին ճանաչվեց միջազգայնորեն, հակամարտությունը բարձրացրեց նոր՝ միջպետական մակարդակի[1]: Դրան զուգահեռ, Արցախում իրավիճակն օրեցօր վատթարանում էր: 1991թ. օգոստոսի 24-ից դադարել էին ինքնաթիռային թռիչքները Ստեփանակերտ, սեպտեմբերից մուտք չէր գործում ոչ մի գնացք, վառելիքի բացակայության պատճառով սեպտեմբերի 19-ից չէր աշխատում Ստեփանակերտի ավտոձեռնարկությունը, հաճախակի անջատվում էր էլեկտրականությունը, վտանգված էր գազի մատակարարումը[2]: Բացի այդ, նոյեմբերի վերջերից ամեն օր ռմբակոծվում էին ԼՂՀ բնակավայրերը, հատկապես մայրաքաղաք Ստեփանակերտը: Ազատագրական շարժման ղեկավարների առջև հրատապ խնդիր դրվեց՝ ստեղծել պատերազմական իրավիճակին համապատասխան իշխանական մարմիններ և առաջին հերթին՝ կանոնավոր բանակ: Նոյեմբերից Ադրբեջանի կողմից լայնածավալ զինված ագրեսիա սկսվեց ԼՂՀ-ի դեմ: Առաջին անգամ խաղաղ բնակավայրերի վրա կիրառվեց միջազգային համաձայնագրերով արգելված զանգվածային ոչնչացման զենք: Նոյեմբերի 29-ին ռմբակոծվեցին Ստեփանակերտ և Ասկերան քաղաքները, Խնածախ, Հարավ, Շոշ, Ավդուռ և Մյուրիշեն գյուղերը՝ հանգեցնելով բազմաթիվ զոհերի և ավերածությունների[3]:

1991թ. դեկտեմբերի 10-ին տեղի ունեցավ անկախության հանրաքվեն, որով հաստատվեց Լեռնային Ղարաբաղի անկախությունը: ԼՂՀ անկախության հանրաքվեին ներկա գտնվելու նպատակով աշխարհի մի շարք երկրներից եկան 40 անկախ դիտորդներ: Քվեարկության իրավունք ունեցող 132328 արցախցիներից քվեարկության ներկայացան 108.736-ը (82,2%), որոնցից 108.615-ը (99,89%) քվեարկեցին Արցախի անկախության օգտին: Հանրապետության տարածքում ապրող ադրբեջանցիները հանրաքվեին չմասնակցեցին: Հանրաքվեին Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող ԼՂՀ քաղաքացիների մասնակցության կազմակերպումն իր վրա վերցրեց «Արցախ» հայրենակցական միությունը[4]: Դիտորդներն արձանագրեցին, որ ԼՂՀ-ում անկախության հանրաքվեն անցել է միջազգային բոլոր նորմերին համապատասխան, և ոչ մի խախտում չի արձանագրվել: Նրանք հատուկ դիմում հղեցին աշխարհի խորհրդարաններին և ՌԴ նախագահին, որտեղ նշվում էր, որ ադրբեջանական կողմն ամեն կերպ փորձել է խոչընդոտել հանրաքվեի անցկացմանը:

Դեկտեմբերի 10-ին՝ հանրաքվեի օրը, տարբեր զինատեսակների կիրառմամբ ուժգին հրետակոծվեցին Ստեփանակերտ քաղաքն ու հարակից բնակավայրերը: Զոհվեց 10 և վիրավորվեց 11 հայ խաղաղ բնակիչ[5]: Դեկտեմբերի 11-ին ԼՂՀ ժողովրդական պատգամավորների խորհուրդը, նախագահ Լեոնարդ Պետրոսյանի ստորագրությամբ, դիմում հղեց Բելառուսի ԳԽ-ի նախագահ

---

[1] Վաալ Թոմաս դե, Սև այգի: Հայաստանն ու Ադրբեջանը խաղաղության և պատերազմի միջով, Երևան, 2014, էջ 232:
[2] Աբրահամյան Հ., Ճակատագրին ընդառաջ, Երևան, 2001, էջ 144:
[3] Հակոբյան Տ., նշվ. աշխ., էջ 31:
[4] Արշակյան Ա., Արցախյան գոյապայքարը (1985-1992 թթ.), Երևան, 2004, էջ 205:
[5] Հակոբյան Տ., նշվ. աշխ., էջ 33:

Շուշկևիչին, Ռուսաստանի նախագահ Ելցինին և Ուկրաինայի նախագահ Կրավչուկին, որում նշվում էր, որ ԼՂՀ-ն ցանկանում է անդամակցել այդ պետությունների համագործակցությանը՝ որպես իրավահավասար անդամ:

1991թ. դեկտեմբերի 16-ին ԼՂՀ Գործադիր խորհրդի գործադիր կոմիտեի անունից դիմում հղվեց ՄԱԿ-ին, ինչպես և ԱՊՀ-ին, որով խնդրվում էր ԼՂՀ-ն ճանաչել որպես անկախ պետություն, որը երաշխավորում է «միջազգային ճանաչված բոլոր նորմերի, մարդու՝ անկախ ազգային պատկանելությունից և կրոնական համոզմունքներից, իրավունքների և ազատությունների պաշտպանությունը»: ԼՂՀ Գործկոմի նախագահ Լեոնարդ Պետրոսյանը դեկտեմբերի 23-ին հանդես եկավ ԱՊՀ-ի անդամ երկրների նախագահներին ու խորհրդարաններին ուղղված հայտարարությամբ, որտեղ ներկայացնելով Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ կատարվող հանցագործությունները՝ ԱՊՀ-ի ժողովուրդների և նախագահների ուշադրությունը հրավիրում էր այն հանգամանքի վրա, որ «Ադրբեջանի կողմից իրագործվող խոշորամասշտաբ հարձակման անուղղելի հետևանքների համար պատասխանատվությունն ընկնում է ոչ միայն նրա ղեկավարության, այլև բոլոր նրանց վրա, ովքեր անտարբեր մնացին ավելի քան երեք տարի տառապող Լեռնային Ղարաբաղի ժողովրդի բազմաթիվ դիմումներն ու ժամանակին գործուն միջոցներ չձեռնարկեցին հարձակվողներին կանգնեցնելու համար»[1]: ՀՀ Գերագույն խորհուրդը ևս դեկտեմբերի 26-ի փակ նիստում քննության առնելով ԼՂՀ-ում ստեղծված վիճակը՝ ընդունեց հայտարարություն, որով ԱՊՀ երկրներին կոչ էր արվում «գործուն միջոցներ ձեռք առնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության անվտանգության և կենսագործունեության ապահովման համար»[2]: Այս նախաձեռնություններն, ինչ խոսք, չստացան համարժեք արձագանք:

1991 թ. դեկտեմբերի 28-ին կայացան ԼՂՀ Գերագույն խորհրդի (հետագայում՝ Ազգային ժողով) պատգամավորների ընտրություններ: 1992 թ. հունվարի 6-ին կայացավ հանրապետության առաջին գումարման Գխ առաջին նստաշրջանը, որն ընդունեց ԼՂՀ անկախության հռչակագիրը: Հունվարի 8-ին ԼՂՀ Գխ նախագահ ընտրվեց Արթուր Մկրտչյանը, իսկ նախարարների խորհուրդը ղեկավարեց Օլեգ Եսայանը: Կարճ ժամանակում հաստատվեցին ԼՂՀ պետական ատրիբուտիկան՝ դրոշը, գերբը և օրհներգը: Մարտերի բովում կազմավորվեց նաև ԼՂՀ բանակը:

Նշված իրադարձությունների համատեքստում կարևորվում էր ղարաբաղյան հակամարտության գոտում խաղաղ բանակցությունների գործընթացը, որը վարում է ԵԱՀԿ Մինսկի խումբը, սակայն Ադրբեջանը մշտապես մերժում է հիմնախնդրի՝ քաղաքական մեթոդներով կարգավորումը: Մեր օրերում, երբ Արցախն այլևս ամուր պետականություն ունի, իսկ նրա անկախությունն անվիճարկելի է, հակամարտության վերջնական լուծման կողքին դրվում է նաև Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման և նրա սահմանների խնդիրը:

Արցախի իշխանությունները բազմիցս հայտարարել են, որ խնդրի կարգավորումից հետո միջազգայնորեն ճանաչված Արցախը չի լինելու ԼՂԻՄ սահմաններում: Իսկ թե ինչպիսի՞ն կլինեն այդ սահմանները ենթադրյալ խաղաղության պայմանագրից հետո՝ այսօր ոչ ոք ասել չի կարող: Եվ եթե երբևէ գա այն օրը, երբ Ադրբեջանի քաղաքական վերնախավը համարձակություն ունենա հաշտվել անկախ Արցախի գոյության անխուսափելիության հետ, ապա այդ

[1] Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1991թ. օգոստոս-1992թ. հունվար), Փաստաթղթեր, Եր., 2011, էջ 160-161:
[2] Նույն տեղում, էջ 162-163:

դեպքում միայն կարող է խոսք լինել Արցախի և Ադրբեջանի պետական սահմանների ճշգրտման մասին՝ բնականաբար Արցախի ազատագրված շրջանների համատեքստում:

Ղարաբաղյան հարցի լուծման նկատմամբ Հայաստանի որդեգրելիք գլխավոր սկզբունքը պետք է լինի հետևյալ ձևակերպումը՝ հակամարտության վերջնական կարգավորումը չպետք է հանգեցնի Հայաստանի և Արցախի ռազմավարական անվտանգության մակարդակի իջեցմանը: Այսուհանդերձ, միջազգային և տարածաշրջանային ներկա պայմաններում հայկական կողմի տարածքային որևէ զիջում, կարծում ենք, արդարացված չի լինի: Պետք է իրատես լինել. կարգավորում ասվածն այսօր այնքան անիրական է, այնքան հեռու, որ խոսել միջազգայնորեն ճանաչված Արցախի վերջնական սահմանների մասին, պարզապես լուրջ չէ:

Մարինե Գևորգյան

ԼՂՀ ՀՌՉԱԿՈՒՄԸ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵՆ ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Բանալի բառեր՝ *ԼՂՀ, անկախության հռչակում, հանրաքվե, պետականություն, միջազգային ճանաչում*

Հոդվածում քննարկվել է Արցախի նկատմամբ Ադրբեջանի տարածքային նկրտումների հիմնազուրկ լինելը, ապա ԼՂՀ հռչակումը, անկախության հանրաքվեն և պետականության կայացման գործընթացը: Արցախի պետականության կայացման ներկա փուլում կարևորվում է նաև հակամարտության խաղաղ հանգուցալուծումը, ինչպես նաև Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը. հանգամանքներ, որոնք կծառայեն տարածաշրջանում կայունության և երկարատև խաղաղության հաստատմանը:

Марине Геворгян

ПРОВОЗГЛАШЕНИЕ НКР И РЕФЕРЕНДУМ НЕЗАВИСИМОСТИ В КОНТЕКСТЕ СТАНОВЛЕНИЯ ГОСУДАРСТВЕННОСТИ АРЦАХА

Ключевые слова: *НКР, провозглашение независимости, референдум, государственость, международное признание*

В статье обсуждаются безосновательные территориальные претензии Азербайджана по отношению к Арцаху, а так же провозглошение НКР, референдум о независимости и процесс установления государственности. На нынешнем этапе становления государственности Арцаха очень важно мирное урегулирование конфликта, а также международное признание Республики Арцах: обстоятельства, которые будут способствовать утверждению стабильности и долгосрочного мира в регионе.

Marine Gevorgyan

THE PROCLAMATION OF NKR AND THE INDEPENDENCE REFERENDUM IN THE CONTEXT OF THE STATE BUILDING OF ARTSAKH

Keywords: *NKR, proclamation of independence, referendum, statehood, International recognition*

The article discusses the groundless territorial claims of Azerbaijan against Artsakh, then the NKR proclamation, the referendum of independence and the process of statehood's formation. At the present stage of Artsakh's statehood the peaceful settlement of the conflict is also highlighted, as well as the international recognition of the Republic of Artsakh. These circumstances will contribute to establishing stability and long-term peace in the region.